

ՊՐԱԾ. Գ. Խ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

**ՆԱԽԱԳՈՒԹԱՆԻԿ ՈՒՆԵՑՈՂ
ԳՈՒԹԱՆԻ ԴԵՐԸ^Ը
ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ**

Հ Ա Յ Ա Տ Տ Տ Հ Հ Ր Ա Տ

ԵՐԵՎԱՆԸ

1942



631.312

Ա - 43

Ապրիլի 1 1981 թ.

ՆԱԽԱԳՈՒԹԱՆԻԿ ՈՒՆԵՑՈՂ
ԳՈՒԹԱՆԻ ԴԵՐԸ
ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

~~Վահակներ~~
~~Վահակներ~~
Հ 2659



Հ Ա Յ Պ Ե Տ Տ Հ Ր Ա Տ
ԵՐԵՎԱՆ * 1942

Проф. Г. Х. Агаджанян

Роль предплюжника

и его применение

(На арм. языке)

Армгиз—1942—Ереван

Պատ. խմբագիր՝

Վ. ՍԿՐՏՅԱՆ

Վ.Ֆ. 1879. Պատվեր 263. Տիրաժ 1000.

Տպագրական 1³/₄ մամ. Հեղինակային 0,64 մամ.

Մեկ մամուլում 17280 նշան.

Ստորագրված է տպագրության 20/IV 1942 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ՆԱԽԱԳՈՒԹԱՆԻԿ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒԹԱՆԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

Հայրենական պատերազմի պայմաններում
ժամանակին կատարվող և լավորակ վարը,
նախացանքային աշխատանքները, ցանքը և
ցանքերի հետադա խնամքն ունեն խոշոր նշա-
նակություն:

Ցանված յուրաքանչյուր հեկտարից այս տա-
րիներում մենք պարտավոր ենք և պետք է
ստանանք ավելի մեծ բերք, քան նախկին տա-
րիներին էինք ստանում: Բացի այդ, նախկին
տարիների հետ համեմատած մենք պետք է ցա-
նենք ավելի շատ և երկրին տանք ավելի մեծ
քանակությամբ հացահատիկ, բամբակ, կարտո-

Փիլ և այլ մթերքներ, որոնք անհրաժեշտ են
ինչպես ռազմաճակատի, այնպես էլ թիկունքի
կարիքները բավարարելու և մեր երկրի պաշտ-
պանական հղորությունն ավելի ևս բարձրացնե-
լու համար:

Կազմակերպչական և այլ բնույթի աշխա-
տանքներից բացի, բերքի բախտը մեծ չափով
կախված է ագրոտեխնիկայի ողջ կոմպլեքսի
լրիվ և անթերի կատարումից: Բոլոր կոլխոզների,
սովխոզների ու հողային օրգանների աշխատող-
ների առաջնահերթ խնդիրը պետք է լինի՝ օգ-
տագործել տնտեսությունում եղած բոլոր տեսա-
կի պարարտանյութերը և մշակվող բոլոր դաշ-
տերում կիրառել բարձր ագրոտեխնիկա: Իսկ
ագրոտեխնիկական աշխատանքների կոմպլեք-
սում ամենակարևոր և պատասխանատու աշխա-
տանքներից մեկը հողի մշակությունն է:

Հողի լավորակ մշակումն ու ցանքին նախա-
պատրաստելը բերքատվության բարձրացման
անհրաժեշտ պայմանն է: Հողի մշակման աշխա-
տանքների նպատակն է՝ հողում ջուր կուտակել
բույսերին մատչելի սննդանյութերի քանակը
շատացնել, մոլախոտերի, հիվանդությունների

ու վնասատուների դեմ պայքարել, հողում ընթացող բիոլոգիական և քիմիական պրոցեսների համար բարենպաստ պայմաններ ստեղծել և այլն:

Հողի լավագույն մշակումից է կախված նաև արտադրական հետագա աշխատանքների բնույթը, որակը և էֆեկտը, հետևապես նաև բերքի քանակն ու որակը:

Հողը վարելիս մշակման է ենթարկվում նրա վերին շերտը, կամ ինչպես ընդունված է անվանել՝ վարելաշերտը, իսկ նրա ցածի շերտը կամ ենթավարելաշերտը միայն որոշ ազդեցության է ենթարկվում վարելաշերտում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով:

Հողի մշակությունը բաղկացած է մի շարք ձևերից ու աշխատանքներից: Այդ աշխատանքները կատարելու համար կան մի քանի տեսակ գործիքներ և մեքենաներ: Սակայն հողի մշակման առանձին միջոցառումների և գործիքների ու մեքենաների աշխատանքի անալիզը ցույց է տալիս, որ հողի մշակման տեխնոլոգիական պրոցեսը սահմանափակվում է մի քանի խնդիրներով միայն, որոնք տարբեր գործիքների ու մեքենաների աշխատանքի ժամանակ տարբեր

ձեւըով են կատարվում և միանդամայն տարբեր հետեանքներ են ունենում:

Այս բլոշյուրում մենք կանգ կառնենք հօդի մշակման աշխատանքների սիստեմում առաջնակարգ նշանակություն ունեցող վարի և նախագուքանիկ ունեցող գուքանի աշխատանքի նկարագրության վրա, **ո՞ն ըստ ակադեմիկ Վ. Ռ. Վիլյամսի «Սովետական ուսուցչության ազրոնոմիայի ամենակարևոր խնդիրն է, որպիսի անխտիր ամեն կարգի ազրոնոմիական բալոր միջոցառումների եֆեկտը կորչում է հողն տնտերուկտուր լինելու հետևանքով», իսկ հողի լավագույն ստրուկտուրա ստանալու համար մեծ դեր է կատարում նախագութանիկ ունեցող գութանով կատարվող կուլտուրական վարը:**

ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Է ՑՈՒՐԱՓԱՆՉՅՈՒՐ ՏԸՐԻ ՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈՂԻ ՎԵՐԻՆ ՇԵՐՏԸ ԳՅԵԼ ՑԱՌ, ԻՍԿ ՑԱՌԻ ՇԵՐՏԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՎԵՐԵՎ,

Ազրոնոմիական գիտության մեջ այժմ արդեն վերջնականապես ապացուցված է, որ երկրագործության ամենամեծ խնդիրը հողի բեր-

բիության բարձրացումն է՝ լավագույն ստրուկ-
տուրա ստեղծելու և հողի կնճիկներին ամրու-
թյուն տալու միջոցով, որովհետև միայն ամուր
ստրուկտուրա ունեցող հողը կարող է բռնյա-
շանընդհատ պահանջը ջրի, սննդանյութերի և
այլ պայմանների նկատմամբ անընդհատ էլ բա-
վարաբեր։ Հողի նման վիճակ ստեղծելու համար,
համաձայն ակադ. Վ. Ռ. Վիլյամսի ուսմունքի,
խոտադաշտային ցանքաշրջանառություններ կի-
րառելուց բացի, անհրաժեշտ է նաև վարը կա-
տարել նախագութանիկ ունեցող գութանով—
հետեւյալ պատճառներով։

Յուրաքանչյուր տարի, արտադրական պայ-
մաններում, հողի երեսի մոտ 10 սմ. խորու-
թյան շերտը կորցնում է ստրուկտուրան և այդ
ստրուկտուրայի ամրությունը։ Այդ եքնույթի
պատճառները երեք բնույթի են՝ մեխանիկական,
ֆիզիկո-քիմիական և բիոլոգիական։

Յուրաքանչյուր տարի հողի մշակման, ցան-
քի, ցանքերի խնամքի և բերքահավաքի ժամա-
նակ հողի վերին շերտը պնդանում է, որի հե-
տեանքով խիստ մեծանում է նրա կապակցա-

կանությունը և վարելու ժամանակ գործիքնեւ
րին դիմադրություն ցույց տալու և կոշտեր
առաջացնելու հատկությունը։ Այդ պնդացման
պատճառներից մեկն էլ հողի վրայով մարդկանց,
տրակտորների, կենդանիների, սայլերի և այլ
գործիքների տեղաշարժվելն է։ Վեգետացիայի
ընթացքում հողի ստրուկտուրայի մեխանիկա-
կան քայլացում տեղի է ունենում նաև մթնո-
լորտային տեղումների ժամանակ՝ կաթիլահե-
ղուկ ջրի հարվածների ազդեցության տակ։

Այս մեխանիկական քայլացումը պակասեց-
նելու և մինիմումի հասցնելու համար անհրա-
ժեշտ է հողի մշակման բոլոր աշխատանքներն
անխտիր կատարել միայն քեշի ժամանակ։ Քե-
շից շուտ կամ ուշ վարելու դեպքում, հողի մաս-
նիկների մեխանիկական քայլացումից բացի,
նրա մեջ եղած գործունյա հումուսը, որը ցնմեն-
տի դեր է կատարում և հողի մասնիկները մի-
մյանց միացնելով կնձիկներ է գոյացնում,
փշրվում և անզործունյա է դառնում։

Հողի ստրուկտուրայի քայլացման երկրորդ
պատճառը ֆիզիկո-ֆիմիական է։ Յուրաքանչյուր
տարի հողի վրա մթնոլորտային տեղումների ձևով

թափվում է ջրի հսկայական քանակություն։
Մեր լեռնային շրջանների պայմաններում յուս
բաքանչյուր հեկտարի վրա տարեկան թափ-
վում է միջին հաշվով $4000 - 5000$ տոնն ջուր,
որն իր մեջ պարունակում է ամոնիումի և ազու-
տի այլ միացությունների զգալի քանակություն։
Այդ ամոնիումը կանվելով հողի վերին շեր-
տում գտնվող հումուսի կողմից, դուրս է վանում
կլանված կալցիում կատիոնը, որը ջրի միջոցով
լվացվում և հողի ցածի շերտն է տարվում։ Դրա
հետևանքը լինում է այն, որ հողի վերին շերտը
ամեն տարի վեգետացիայի ժամանակաշրջանում
անխուսափելիորեն աղքատանում է կալցիումից։
Իսկ կալցիումից և գործունյա հումուսից աղ-
քատացած հողը հեշտությամբ կորցնում է իր
ստրուկտուրան, դժվարությամբ է վարվում, վա-
րելիս էլ մեծ կոշտեր է տալիս, որը ստիպում է
հողը մի քանի անգամ փոցխել, իսկ դա անխու-
սափելիորեն առաջ է բերում ավելի մեծ չափերի
հասնող փոշիացում։ Դրան հակառակ, երբ հողը
հարուստ է լինում կալցիում կատիոնից չպըրկ-
ված հումուսով, նրա կնձիկները թե թաց և թե

չոր ժամանակ ամուր են լինում, և քանի որ
կնձիկների մեջ կապակցականությունը շատ
թույլ է արտահայտված լինում, ուստի այդպիսի
հողը հեշտ է վարվում, կոշտեր չի տալիս և
ապահովում է բարձր բերքը:

Սրանից բացի, ի տարբերություն անստրուկ-
տուր հողերի, սարուկտուրան պահպանած հողի
վերին շերտը լավ ու լրիվ է յուրացնում մթնո-
լորտային տեղումները, լավանում է նրա օդա-
յին ռեժիմը և հեշտանում է սննդանյութերի
մոբիլիզացիան:

Ստրուկտուրայի քայքայման երրորդ պատ-
ճառը բխողգիտական է, երբ հողում միլիարդնե-
րով ապրող միկրոօրգանիզմներն իրենց կենսա-
գործունեության համար օգտագործում են հու-
մուսը և այսպիսով պատճառ դառնում այն շաղա-
խանյութի տարբարուծման, որի առկայությամբ
մեծապես պայմանավորված է ամուր սարուկ-
տուրային հատիկների գոյությունը:

Կուշտուրական վարի ժամանակ հողի ցածի
շերտը բարձրանում է վերև, իսկ վերին շերտն
իր մեջ պարունակած օրգանական նյութերի
(բույսերի ցողունների, արմատների, սերմերի

և այլ մնացորդների) պաշարով ընկնում է ցած
այնպիսի պայմանների մեջ, ուր նա ժամանա-
կի ընթացքում զգալի չափով վերտականգնում է
իր արտադրական մեծ արժեք ունեցող հատկու-
թյունները (փշրվելու հատկությունը, ստրուկ-
տուրայի ամրությունը և այլն), որովհետեւ նա
ազատ է լինում մեխանիկական քայլայումից և
մթնոլորտի կաթիլահեղուկ ջրի քայլայիչ ազ-
դեցությունից: Դրանից բացի, հողի ցածի շեր-
տում թթվածնի սակավության հետևանքով օր-
գանական նյութի քայլայումը կատարվում է
զանդաղ, որը նպաստում է նրանում հումուս
կուտակելուն:

Մինչև այժմ ասածներից դժվար չի գալ այն
պարզ հետևության, որ հողի ստրուկտուրայի
քայլայման բոլոր պատճառների ծանր հետե-
վանքների գեմ հաջող պայքար մղելու, հողի վե-
րին հորիզոնում անհրաժեշտ քանակությամբ
գործունյա հումուս ունենալու և կալցիումի
միացությունները հողի ցածի շերտերից վերին
շերտը բարձրացնելու համար անհրաժեշտ է յու-
րաքանչյուր տարի ցածի լավ ստրուկտուրա
ունեցող հողը բարձրացնել վերև, իսկ վերին՝ տեխ-

Նիկական-արտագրական դրական հատկությունները կորցրած և ստրուկտուրազուրկ հողաշերտը ցած գցել, որտեղ նա ժամանակի ընթացքում, ինչպես արդեն ասվել է, նորից ձեռք է բերում լավ ստրուկտուրա:

Վերը նկարագրած դրական կողմերից բացի, հողի վերին շերտը ցած գցելու դեպքում նրանում եղած մոլախոտերն ու նրանց սերմերը հողի տակ են ընկնում, որոնց մեծ մասը մեռնում է: Վերջապես, հողի տակն են ընկնում նաև զանազան օրգանական մնացորդներ ու պարարտանյութեր, որոնց մի մասն աերոբ պայմաններում քայլայվելով՝ բռւյերին մատչելի սննդանյութերի է վերածվում, իսկ ավելի խոր ընկած մասն անաերոբ քայլայմամբ ավելացնում է հումուսի պաշարը:

Սեա այս բոլորի պատճառով աներամեշտ է ամեն տարի վարի միջոցով եռողի վերին շերտը գցել ցած, իսկ ցածի շերտը բարձրացնել վերև:

ՆԱԽԱԳՈՒԹԱՆԻԿ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒԹԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հողը շուրջ տակ կարելի է լրիվ (180°) և ոչ լրիվ ($մեծ մասամբ$ 135°): Շուրջ տակ կարելի է

գութաններով կամ շուռ տալու համար համաշաղատասիան թե ունեցող այլ գործիքներով, սակայն լրիվ և խոր շուռ տալ կարելի է միայն գութաններով։ Հողը շուռ տրվելու ժամանակնական փշրվում է։ Այդ բանը տարբեր գութանների աշխատանքի ժամանակ տարբեր չափով է տեղի ունենում։

Հողի վերին շերտը ցած զցելու և ցածի շերտը վերև բարձրացնելու աջակատանքը ամենից կատարյալ և ամենից լավ տեղի է ունենում Ռուդոլֆ-Սակկի կողմից առաջարկված նախագութանիկ ունեցող գութանի միջոցով կատարվող կուլտուրական վարի ժամանակ։

Երկար ժամանակ այն կարծիքն է տիրապետել, որ նախագութանիկ ունեցող գութանով պետք է վարել միայն ճմակալած հողերը, օրինակ՝ խոպան և երկար ժամանակ մշակության տակ չեղած ու ճմակալած հողերը կամ բազմամյա խոտերից հետո վարվող հողամասերը։ Գըտնում էին, որ ճմակալած հողերում նախագութանիկը, որին նույնիսկ ճիմհան անունն էին տալիս, պետք է կտրի, բարձրացնի և ակոսի տակը զցի ճմաշերտը, իսկ հետեւից դրված մեծ իրանը

բարձրացնի տակի չճմակալած շերտը և դժի
առաջին՝ ճմակալած շերտի վրա։ Այս տեսակետը,
ի հարկե, ճիշտ չէ, քանի որ նախագութանիկ
ունեցող գութանի դերը միայն դրանով չի սահ-
մանափակվում։ Այդպիսի գութանով վար պետք
է կատարել բոլոր հոդային տիպերում, բոլոր կլի-
մայտեան պայմաններում և բոլոր կուլտուրանե-
րի համար։ Թե՛ ցրտահերկը և քե՛ այլ ժամանակ
կատարվող վարն անպայման պետք է կատարել
նախագութանիկ ունեցող գութանով։ Այս ձևի գու-
թանով պիտի վարել և՛ խոպանը, և՛ խոզանատեղը,
և՛ մնացած բօլոր տիպի հոդերը։

Վարն այդպես պետք է կատարել այն պատ-
ճառով, որպեսզի բոլոր պայմաններում և դեպ-
քերում իր տեխնիկական արտադրական դրա-
կան հատկությունները կորցրած հողի վերին
շերտը հեռացվի, անվնաս դառնա և նրա տեղը
բարձրացվի ցածի, արտադրական կարևոր հատ-
կություններով օժտված հողաշերտը։

Նախագութանիկ ունեցող գութանի նախա-
գութանիկը հատում և վերցնում է ամբողջ առի
լայնության երկու երրորդ մասը։ Նախագութա-
նիկը, պոկելով հողաշերտի վերին ամրացած

մասը, գցում է ակոսի մեջ (հատակը), իսկ դրան
նից հետո եկող մեծ իրանը վերցնում է տակի
փուխը շերտը և լցնում նախագութանիկի գցած
շերտի վրա։ Որովհետեւ ցածի շերտի հողը վերը
նկարագրած պատճառներով ավելի փուխը է լի-
նում և լավ ստրուկտուրա է ունենում, ուստի
և նախագութանիկ ունեցող գութանով վարած
հողամասի երեսը ծածկված է լինում փուխը շեր-
տով։

Նախագութանիկ ունեցող կուլտուրական գու-
թանի վարի խորությունը 22 սմ-ից պակաս
չպետք է լինի։ Նախագութանիկը վերցնում է
10 սմ. խորությամբ հողաշերտ, իսկ հետեւ հիմ-
նական իրանը վերցնում է ևս 12—15 սմ. (կա-
րող է վերցնել ավելին), որով վարի ընդհանուր
խորությունը կազմում է 22—25 սմ.։ Ավելի
երես վարելու դեպքում գլխավոր իրանի վերցրած
հողը բավական չի լինում նախագութանիկի
կտրած հողաշերտը ծածկելու համար։

Նախագութանիկի հատած շերտի խորությունը
պետք է լինի 10 սմ. նաև այն գեպքերում, երբ
վարը կատարվում է 22 սմ. ավելի խոր, նույ-
նիսկ մինչև 30 սմ. խորությամբ։ Միայն սեղով

և արվանդակով վարակված հոգամասերում՝ նաև խագութանիկով պետք է կտրել 12 ամ.-ից ոչ պակաս հողաշերտ, որի հետ միաժամանակ պետք է մեծացնել նաև վարի ընդհանուր խորությունը:

Նախագութանիկ ունեցող դութանով վար կատարելիս նախագութանիկի խիստ գլանաձե թեփ վրա բարձրանում և շուրջ է գալիս հողի մասսայի ամենափոքր դիմադրության մակերեսներով ճաքճգված վերին շերտը, որը գլխավոր իրանի կողմից ծածկվում է՝ փշրվելու և կնծիկ-ների մասսայի վերածվելու ընդունակ ու փոշուց ազատ ցածի հողաշերտով։ Այս բոլորից բացի, նախագութանիկի աշխատանքի շնորհիվ մեծանում է գութանի կայունությունը, որի հետևանքով մեղմանում է վարի ժամանակ մաճկալի, կամ պրիցեպչիկի նկատմամբ ունեցած պահանջը՝ նրա ուժեղ և հմուտ լինելու խնդրում։ Այս հանգամանքն առավել կարենոր է ներկա պայմաններում, քանի որ այդպիսի գութանով նորմալ աշխատանք կարող են ապահովել նաև ոչ այնքան փորձված և ուժեղ տղամարդիկ, պատանիներն ու կանայք։

Նախագութանիկ ունեցող դութանով վարելու դրական կողմերից մեկն էլ այն է, որ այդպիսի

վարից հետո հողամասի փոցխումը, որն զգալի
աշխատանք պահանջելով հանդերձ, ազբոտեխնի-
կորեն վնասակար գործողություն է հանդիսա-
նում (հողի կնճիկները քայքայելու ու փոշիաց-
նելու պատճառով, ինքնըստինքյան ավելորդ է
դառնում):

Այսպիսով, նախագութանիկ ունեցող գուրա-
նով կատարվող աշխատանքը հողի մշակման աշ-
խատանքների կոմպլեքսում կարևորագույն նշա-
նակություն ունեցող խնդիրներից մեկն է, ուստի
նրա գործադրությունը պետք է պարտադիր հա-
մարել բոլոր դեպքերում, բացի ցելահողամասի
տմառային վարից: Նախագութանիկը պետք է
հանել միայն այն ժամանակ, եթե ամառը ցելա-
հողամասում կատարվում է երկակի վար և գո-
մաղբի վարածածկում, որովհետեւ այդ գեղքում
գոմաղբը հողի մասսայի հետ ավելի լավ է խառ-
նըգում:

Նախագութանիկ ունեցող գութանով կատար-
վող վարը միանգամայն համապատասխանում է
վարին առաջադրվող թե տնտեսական և թե կաղ-
մակերպական պահանջներին:

ՆԱԽԱԳՐԻԹԱՆԻԿ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒԹԱՆԻ
ԿԸՌՈՒՑՎԱԾՔԸ

Թուգուլֆ-Սակկի կողմից առաջարկված նա-
խագութանիկ ունեցող զութանը բազկացած է
գութանի հետեւ մասում դրված գլխավոր իրա-
նից (կորպուսից), ձևիչից և նախագութանիկից,
որը գլխավոր իրանի փոքրացրած ճիշտ պատճեն
է և որի բոլոր մակերեսները խիստ զուգահեռ են
գլխավոր իրանի համապատասխան մակերեսնե-
րին։ Նախագութանիկի թեր գլանածեն է, խև խոփն
ամրացված է խիստ դիք դիրքով։ Այս նախագու-
թանիկի աշխատանքը տեղի է ունենում ավելի
ծանը պայմաններում, քան գլխավոր իրանի աշ-
խատանքը, որովհետեւ նախագութանիկը պոկում
և շուռ է տալիս հողի վերին պնդացած շերտը։
Այդ խև պատճառով նախագութանիկի աշխա-
տանքը հեշտացնելու համար գութանի մասերն
այնպես են տեղակայված, որ նախագութանիկի
հատած շերտի լայնությունը կազմում է գլխա-
վոր իրանի կտրած շերտի լայնության $\frac{2}{3}$ մասը։
Ձևիչն անհրաժեշտ է ակոսի ցածի մասում
մաքուր վար ստանալու համար, որտեղից անց-

նում է ակոսային անիվը և որից կախված է հաշորդ ակոսի ճիշտ ուղղությունը և առանց խարակների վար կատարելը։ Համաձայն ակադեմիկ Վ. Ռ. Վիլյամսի հաշվումների, ճեխչի գործադրության շնորհիվ տեղի է ունենում քաշող ուժի և վառելանյութի խնայողություն, որը մեծ կարևորություն ունեցող հանգամանք է։

Գլխավոր իրանի թեր խիստ գլանաձե չէ։ Նրա հիմքում դրված է ոչ թե շրջանաձե, այլ էլիպսաձե դլան, որի կորության աստիճանն անընդհատ մեծանում է և դրա հետևանքով հողի փշրվելու գործողությունն ավելի լավ է կատարվում։

Կուլտուրական գութանով վարելու դեպքում հողամասի մակերեսն ունենում է թույլ ալիքաձեռնություն, և եթե այդ գրաւթյամբ ցանք կատարվի, սկզբու միատեսակ պայմանների մեջ չեն ընկնի ու խայտարդեաց ցանք կստացվի։ Հողամասի մակերեսը հարթելու համար գործ են ածում փայտի քարշակ, որը պետք է այնպես աշխատեցնել, որ նա կատարների ուղղության հետ որոշ անկյուն կազմի։

Քարշակը հարթում է հողամասը, սակայն իր
թեթևության հետևանքով հողի փոշիացում չի
առաջացնում:

ԳՈՒԹԱՆԻ ՏԵՂԱԿԱՑՈՒՄԸ

Նախքան աշխատանքներն սկսելը, պետք է
ստուգել գութանի բոլոր մասերը, որովհետև գութանի ճիշտ տեղակայումից և վիճակից մեծ
չափով կախված է նաև նրա աշխատանքի թե
արտադրողականությունը և թե որակը: Ստուգ-
ման պետք է ենթարկել՝

1. իրանների դիրքի ճշտությունը, անիվների
ու սկավառակավոր ձեիչների, վտուլկանների և
սռնակների վզիկների դրությունը.

2. հիմնական իրանների և նախագութանիկ-
ների խոփերի ու սկավառակավոր ձեիչի սրու-
թյան աստիճանը.

3. հեղյուսային (բոլտային) ամրացումները
և մյուս մասերը:

Դրանից հետո պետք է տեղակայել նախագու-
թանիկը և ձեիչը:

Իրանների դրվածքի ստուգումը պետք է կա-

տարել միանգամայն հարթ տեղում, որի համար գութանը պետք է դնել աշխատանքային վիճակի մեջ, ըստ որում, գութանի ճիշտ տեղակայման դեպքում բոլոր իրանների խոփերը հենված են լինում հողին:

Իրանների գրվածքի ճշտությունից կախված է աշխատանքի ժամանակ գութանի կայունությունը, հետևապես նաև վարի որակը: Երբ խոփերի բերանները միենույն բարձրության վրա չեն գտնվում, գութանի վիճակը կայուն չի լինում և մեծանում է քաշի դիմադրությունը: Դրանից բացի, հաճախ հնարավոր չի լինում նման վիճակում գտնվող գութանի վարը խորացնել:

Հարթ տարածություն չկինելու դեպքում գութանի ստուգումը կարելի է կատարել լարի (թելի), կամ ձողի միջոցով: Դրա համար գութանի խոփերը պետք է բարձրացնել (ինչպես այդ արվում է, երբ գութանը մեկ տեղից մի ուրիշ տեղ է փոխադրվում) և ապա խոփերի տակից (բերանից) ձգել լարը: Առաջին և վերջին խոփերի միջև ձգված լարը ցույց կտա մյուս խոփերի բարձրության աստիճանը սահմանված բարձրությունից և նրանց շեղման չափը: Նույնն ավելի լավ կա-

բելի է անել նաև ձողի միջոցով։ Նկատված թերությունները պետք է ամպայմանորեն վերացնել նախքան աշխատանքի անցնելը։ Անհրաժեշտության դեպքում պետք է փոխել խոփերը, եթե գեֆեկտների վերացման բոլոր հնարավորություններն արդեն սպառված են։

Նախադութանիկի տեղակայումը պետք է կատարել այն հաշվով, որպեսզի նրա խոփի բերանը հիմնական իրանի խոփի բերանից բարձր լինի 10—12 սմ., երբ վարը կատարվում է 20—22 սմ. խորությամբ և 15—20 սմ. բարձր՝ երբ վարը կատարվում է 25—30 սմ. խորությամբ։ Սովորաբար առաջին ակոսի վարը նորմալ խորություն չի ունենում, դրանից բացի, գութանի նորմալ աշխատանքը կարող է խանգարվել, երբ գլխավոր իրանի և նախադութանիկի միջև հավաքված հողը, կոշտերը և մոլախոտերի մնացորդները շուրջ չեն գալիս։ Այդպիսի դեպքերում նախադութանիկը պետք է իջեցնել, իսկ հետագա ակոսների վարի ժամանակ դարձյալ բարձրացնել և ամրացնել իր նորմալ բարձրության վրա։ Անխափան և բարձրորակ վար ստանալու համար, նայած աշխատանքի պայմաններին և վարի խո-

բությանը, նախագութանիկի խոփի քիթը հիմնական իրանի խոփի քիթից հեռու պետք է լինի 20—30 սմ. չափով։ Խոնավ հողերի վարի ժամանակ նախագութանիկն ավելի հեռու է տեղակայվում, իսկ չոր հողերում — մոտ Խոր վար կատարելու դեպքում ևս նախագութանիկն ավելի հեռու պետք է տեղակայել, որպեսզի նա չխանգարի հիմնական իրանի աշխատանքը, այսինքն՝ հիմնական իրանի միջոցով կտրած և վերցրած հողը չպետք է քսվի նախագութանիկին։

Սկավառակավոր ձեիչը պետք է տեղակայել այն հաշվով, որպեսզի սկավառակի վտուլկայի սոնակը գտնվի նախագութանիկի խոփի քիթի ուղիղ վերեւում, իսկ սկավառակի ցածի եզրը մոտ 2—3 սմ. ավելի ցած լինի, քան նախագութանիկի խոփի քիթը։

Երբ զաշտում եղած բուսական մնացորդները խխտ բարձր են և հաճախ խանգարում են գութանի աշխատանքը, այդ դեպքում ձեիչը վերը նկարագրված դիրքից պետք է առաջ շարժել այնքան, որքան դա թույլ է տալիս գութանի շրջանակը։

Առաջին ակոսը նորմալ խորության հասցնելու,

կամ նրան մոտեցնելու համար առաջին երկու
անիվները պետք է դնել միենույն բարձրության
վրա, իսկ երկրորդ և հետագա ակոսները վարե-
լիս ակոսային անիվը պետք է իջեցնել այն հաշ-
վով, որպեսզի աշխատանքի ժամանակ գութանի
շրջանակը հորիզոնական դիրք ունենա:

Հետին անիվը պետք է կանոնավորել այն
հաշվով, որպեսզի դաշտային տախտակի հետին
ծայրը $1,0—1,5$ սմ, հողից բարձր լինի:

Գութանի մասերի տեղակայումից հետո պետք
է ձգել բոլոր հեղյուսային ամբացումները (բոլ-
տերը և այլն) և յուղել բոլոր անհրաժեշտ մա-
սերը: Այս նույն աշխատանքները պետք է կա-
տարել պարբերաբար: Դրանից բացի, պետք է
միշտ սուր վիճակի մեջ պահել խոփի և դանակի
բերաններն ու ժամանակին նորոգել փչացած
մասերը կամ փոխարինել նոր մասերով:

ՆԱԽԱԳՈՒԹԱՆԻԿԱՎՈՐ ԳՈՒԹԱՆՈՎ ՎԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԱՅՄԱՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր տարվա աշնան ու գարնան
ցանքի համար ՀՍՍՌ կոլխոզներում ցելերի, ցըր-

տահերկի, դարնանավարի և այլ վարերի կարգով
խոր վար է կատարվում մոտավորապես 400,000
հեկտար տարածության վրա, որի 50 տոկոսը
բաժին է ընկնում ՄՏԿ-ներին։ Հետևապես
200,000 հեկտար տարածության կուլտուրական
վարի ապահովումը կախված է նրանից, թե
Ռեսպուբլիկայի ՄՏԿ-ների ունեցած տրակտորա-
յին գութաններն ինչ չափով են ապահովված
նախագութանիկներով։

Պետք է ասել, որ այս խնդրում մեր ՄՏԿ-
ները գեռ շարունակում են հետ մնալ ՍՍՌՄ-ի
առաջավոր շրջաններից և որ գլխավորն է, որոշ
ՄՏԿ-ների առանձին աշխատողներ (նույն թվում
նաև ազգոնոմներ և մեխանիկներ) թերագնա-
հատելով, կամ ավելի ճիշտ՝ չգիտակցելով նա-
խագութանիկների նշանակությունը, միանգա-
մայն նոր-կարգավորված գութանների վրայից
հանում, դեռ են ձգում նախագութանիկներն
այն պատրվակով, որ «նրանց առկայությունն
ավելացնում է հողի գիմադրությունը և նավթա-
մթերքի գերածախս է առաջացնում»։ Մինչդեռ
ականավոր գիտնական վ. Ռ. Վելյամսը պնդում
է, որ նախագութանիկավոր գութանը ոչ միայն


չի ավելացնում հողի դիմադրությունը, այլ և
գգալի չափով նվազեցնում է այն:

ՍՍՌՄ ժողկոմսովետը և Համկ(բ)Պ Կենտ-
կոմը խոշոր նշանակություն տալով նախագու-
թանիկավոր գութանով կատարվող վարին և ամեն
կերպ ձգտելով խրախուսել այդ բնագավառում
աշխատողներին, դեռ 1939 թվի հունվարի 13-ին
կայացրած որոշումով՝ «ՄՏԿ-ների կատարած աշ-
խատանքի համար հացահատիկային կուտուրա-
ների բնագարձի հաշվարկման կարգի մասին»
սահմանեցին այնպիսի կարգ, ըստ որի նախա-
գութանիկավոր գութանով կատարված վարի հա-
մար ՄՏԿ-ներին տրվում է սովորական վարի
համար սահմանված նորմաներից 6 տոկոսով
ավելի վառելանյութ:

Այդ որոշումը խոշոր չափով նպաստում է
ՄՏԿ-ներում եղած գութանները նախագութա-
նիկներով համալրելու և նրանց լայն օգտագոր-
ծումը կազմակերպելու գործին:

Անհրաժեշտ է կրկին ու կրկին մասսայակա-
նացնել այդ որոշումը յուրաքանչյուր ՄՏԿ-ի
կոլեկտիվում և նրա առանձին բրիգադաներում
բազմակողմանիորեն պարզաբանել նախագութա-

Տըսկառության գումարանի մեջ հառվածված՝ նախագույքանի և սկավառակալու դանակալու առաջամացք:



Նիկի դերն ու նշանակությունը բարձր և կա-
յուն բերքատվության համնելու խնդրում և գոր-
ծոն օգնություն կազմակերպել տրակտորային
բրիգադաների նկատմամբ, այն հաշվով, որ բոլոր
գութանները համալրվեն նախագութանիկներով
և վերջիններս տեխնիկապես ճիշտ տեղակայվեն-
գութանների վրա:

Բացի այդ, անհրաժեշտ է նույնպիսի աշխա-
տանք ծավալել նաև կոլխոզներում, որպեսզի
այնտեղ եղած Սակկի, Էկկերտի և այլ տիպի միա-
կրան (ձիու և եղան) գութանները նույնպես
համալրվեն նախագութանիկներով:

Պետք է վճռական հականարված տալ առան-
ձին դեպքերում նախագութանիկի նշանակու-
թյունը թերագնահատելու վտանգավոր տրամա-
դրություններին և բոլոր հիմնական վարերը կա-
տարել բացառապես նախագութանիկավոր գու-
թաններով:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037086

ԳԻՒԾ 60 ԿՈԹ.

A-2659